

դարձներ՝ խնդրեցի առնուլ. մենք շինականքս ավելի լաւ գիտենք գործածել
զայս քան թէ սուրբ:

Բայց արեր ելաւ հորիզոնին վրայ, եւ քիչ մը առաջ անցան՝ ահա քաղաք մը
երեւցաւ հեռունէն: Գրիգոր քաշեց ձիուն գլուխը, եւ կենդանիները կանգ առին.
Սուրեն վայրկենին արթնացաւ, եւ աչքերը շփելով, «Ի՞նչ կայ, ի՞նչ եղաք»,—
հարցուց:

Եւ տեսնելով կանգուն ահագին տուներ, պարիսպներու բեկորներ, իմացաւ թէ
Բալմիրայի ավերակներուն առջեւ հասած էին, եւ Եփրատ հեռու չէր:

— Երթանք, տղաք,— ըսաւ,— հայրենի հողը թեպէտ հեռու՝ բայց ջուրը մեզի
հասաւ, երթանք նորա եզերքը յոգնութիւն առ նունք:

Գրիգոր սքանչացաւ մնաց այդ մեծ քաղքին ավերակաց վրայ, անապատին մէջ
այդպիսի փառաւոր քաղաք մը իւր հետաքրքրութիւնը կը շարժեր եւ ականայ՝
ձիուն գլուխը դէպի արեգական տաճարը կը շրջեր: Կը կենար կարդալու համար
յունական արձանագրութիւնները: Իսկ Սուրեն իմանալով քեռորդուոյն
ձգտումնքը՝

— Որդեակ Գրիգոր, ուրիշ օր մը այդ փափագը կը լեցնենք, հիմա ժամ առաջ այս
անիծած երկրէն դուրս նետենք մեր անձինքը,— ըսաւ:

Անցան քաղքին արեւելեան դռնէն եւ շարունակելով ճամփան՝ Եփրատ իւր
բոլոր վստմութեամբ երեւցաւ իրենց, իջան եզերքը ջուր խմեցին, իրենց
պաքսիմատը կերան ձիերուն դադար եւ ուտելիք տուին, իրենք նաեւ
հանգչեցան:

— Յապա՛, տղաք, կարծեմ ժամ է հեծնելու, երկու ճամփայ կայ առաջնիս, կամ
այս կողմէն գետն ի վեր, կամ անցնիլ գետը եւ դիմացէն երթալ, դուք որը՞
կ'ընտրեք:

— Դո՛ւ որոշէ,— պատասխանեց Գրիգոր,— մենք պատրաստ ենք քեզ հետեւելու:
Բայց ահա դիմացի կողմը ձիաւորներ կ'երեւան, վեց հոգի են:

— Ուրեմն այդ մարդիկը,— ըսաւ Սուրեն դիտելով,— մեզ կ'ուզեն զրուցել թէ՛ եթէ
կամիք խաղաղ ու հանգիստ ձեր ճամփան շարունակել, գնացէք այդ կողմէն,
մեզ մի՛ մօտիք, վասնզի անգնեցու որդի անազակ կը ծնինք եւ անազակ
կապիկնք եւ անազակի պէս կը մեռնինք: